ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N243-Ա
« 08 » ՆՈՅԵՄԲԵՐ 2023Թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՎ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՀԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՎՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2111-Ն որոշումը, Արենի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1716 և Եղեգիս համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1209 գրությունները՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից՝ Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն բռնի տեղահանված և ՀՀ Վայոց ձորի մարզում մահացած քաղաքացիների հուղարկավորման ծախսերը փոխհատուցելու նպատակով մարզի համայնքներին, որպես աջակցություն, հատկացնել 300 000 (երեք հարյուր հազար), յուրաքանչյուր հուղարկավորության համար 100 000 (մեկ հարյուր հազար)՝ ՀՀ դրամ գումար՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

Recoverable Signature

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**

Հավելված 1
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
"08" XII 2023թ. թիվ 243 որոշման

| Հ/հ | Համայնք | Բնակավայր | Մահացած անձի տվյալները | Հատկացվող գումար /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Արենի | Ագարակաձոր | Ռոզա Հարությունյան | 100000 |
| 2 | Եղեգիս | Հերմոն | Ռազմիկ Հակոբյան | 100000 |
| 3 | Եղեգիս | Հերմոն | Մարգարիտա Բաբայան | 100000 |
| | Ընդամենը | | | 300000 |